ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Արդյունքում, նկատի ունենալով, որ Հայցվորի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 80.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ինչ վերաբերում է փաստաբանի խելամիտ վարձատրության գումարին, ապա նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, կարևորելով նաև քաղաքացիական գործի բարդությանն աստիճանն ու քննության տևողությունը, ներկայացուցչի կատարած աշխատանքը, ծառայության մատուցման արժեքը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

**Վ Ճ Ռ Ե Ց**

«Մայ Փեյջ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժ/պ Գևորգ Ղարիբյանի ծանուցմամբ կայացված թիվ ԵՔԳՀԾՁԲ-25/154 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրով «Մայ Փեյջ» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայության արդյունքը, այն է՝ տեղեկատվական տեսահոլովակը և 3D անիմացիա 2D էլեմենտներով անիմացիոն տեսահոլովակը ընդունել պարտավորեցնելու, ինչպես նաև «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» 09.01.2026թ. N 55-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի շրջանակներում Երևանի

քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժ/պ Գևորգ Ղարիբյանի ծանուցմամբ կայացված թիվ ԵՔԳՀԾՁԲ-25/154 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշում:

Որպես հետևանք՝ Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնել ընդունել ԵՔ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրով «Մայ Փեյջ» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայության արդյունքը, այն է՝ տեղեկատվական տեսահոլովակը և 3D անիմացիա 2D էլեմենտներով անիմացիոն տեսահոլովակը:

Անվավեր ճանաչել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» 09.01.2026թ. N 55-Ա որոշում:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Մայ Փեյջ» ՍՊԸ-ի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար և 80.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IED6-3E6E-4778-ABF5 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:*

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝*

cabinet.armlex.am